ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՆՐԱՔՎԵ
5 ԱՊՐԻԼԻ 2020 ԹՎԱԿԱՆ

ԴԻՏՈՐԴԻ ՁԵՌՆԱՐԿ

www.elections.am

Սույն ձեռնարկը հրապարակվել է ի կատարումն Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 51-րդ հոդվածի պահանջների: Այն կազմվել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից՝ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրիք» սահմանադրական օրենքի, «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումների հիման վրա:

ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Դիտորդական առաքելության նպատակն ընտրական գործընթացների վերաբերյալ հավաստի տեղեկությունների հավաքումն է և դրանց հիման վրա անկախ եզրակացության կազմումը:

Դիտորդական առաքելությունն իրականացվում է դիտորդների միջոցով՝ պահպանելով չեզոքության, անկողմնակալության և ընտրական գործընթացներին չմիջամտելու սկզբունքները:

ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Հանրաքվեի ժամանակ դիտորդական առաքելության իրավունք ունեն՝

- ☑ Հայաստանի Հանրապետության կուսակցությունները.
- ☑ միջազգային կազմակերպությունները և օտարերկրյա այն հասարակական կազմակերպությունները, որոնց կանոնադրական նպատակները ներառում են ժողովրդավարության կամ մարդու իրավունքների պաշտպանության հարցեր.
- ☑ Հայաստանի Հանրապետության հասարակական այն կազմակերպությունները, որոնց կանոնադրական նպատակներն հանրաքվե նշանակելու օրվան նախորդող նվազագույնը վեց ամիս ներառում են ժողովրդավարության կամ մարդու իրավունքների պաշտպանության հարցեր:

Միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա հասարակական կազմակերպությունների դիտորդական առաքելությունների կազմում որպես դիտորդ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ ընդգրկվել ՉԵՆ ԿԱՐՈՂ:

Միջազգային կազմակերպությունները և օտարերկրյա հասարակական կազմակերպությունները դիտորդական առաքելություն կարող են իրականացնել **ՀՐԱՎԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ՝** Կենտրոնական ընտրական հանձնաժողովում հավատարմագրվելուց հետո:

Նշված կազմակերպություններին դիտորդական առաքելություն իրականացնելու հրավեր ուղարկելու իրավունք ունեն՝

- ☑ Հայաստանի Հանրապետության Նախագահը,
- ☑ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահը,
- ☑ Հայաստանի Հանրապետության վարչապետը,
- ☑ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

Միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա և Հայաստանի Հանրապետության հասարակական կազմակերպությունների դիտորդական առաքելությունների՝ հանրաքվեի վերաբերյալ զեկույցները տեղադրվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում (www.elections.am):

Այցելուներ

Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների ներկայացուցիչները հրավերի առկայության դեպքում կարող են հանրաքվեի ժամանակ այցելուի կարգավիճակով իրականացնել հանրաքվեի գործընթացի դիտարկում:

Նշված անձանց հրավեր ուղարկում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը:

Այլ պետությունների ընտրական մարմինների ներկայացուցիչները հրավերի առկայության դեպքում կարող են հանրաքվեի ժամանակ այցելուի կարգավիճակով իրականացնել հանրաքվեի գործընթացի դիտարկում:

Նշված անձանց հրավեր ուղարկում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԿԵՏԸ

Դիտորդներն իրենց առաքելությունն իրականացնում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովում հավատարմագրվելուց հետո:

Դիտորդների հավատարմագրման կարգը, հավատարմագրման համար անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը, հավատարմագրման համար ներկայացվող դիտորդների ցուցակի էլեկտրոնային ձևը, ներկայացման կարգը, դիտորդների և այցելուների վկայականների ձևերը և դրանց լրացման կարգը սահմանված են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016թ. նոյեմբերի 9-ի N 119-Ն որոշմամբ:

Հավատարմագրվելու կամ հավատարմագրված դիտորդների ցանկում փոփոխություններ (լրացումներ) կատարելու համար դիմումները Կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացվում **հանրաքվե նշանակելու օրվանից հետո, բայց քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 15 ՕՐ ԱՌԱՋ**:

Հանրաքվեի ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության կուսակցությունները դիտորդներ հավատարմագրելու համար ներկայացնում են դիմում և դիտորդական առաքելություն իրականացնող անձանց ցուցակը՝ նաև էլեկտրոնային կրիչով՝ Microsoft Excel տարբերակով: Ցուցակի էլեկտրոնային տարբերակը ներբեռնվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքից և լրացվում այդ տարբերակում նշված եղանակով:

Դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով հասարակական կազմակերպությունները դիտորդներ հավատարմագրելու համար ներկայացնում են՝

- **ԴԻՄՈՒՄ, որը պետք է նշում պարունակի՝**
  - վարքագծի կանոնների ընդունման,
  - կազմակերպության դիտորդների ուսուցման մասին:

Հավատարմագրվելու համար դիմումին կից ներկայացվում է.

- կազմակերպության կանոնադրության պատճենը՝ հանրապետությունում գրանցված կազմակերպությունների դեպքում (սույն պահանջը գործում է մինչև իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային գրանցամատյանի մուտքի հնարավորություն ստանալը),
- հրավերի պատճենը՝ միջազգային կազմակերպությունների դեպքում,
- դիտորդական առաքելություն իրականացնող անձանց ցուցակը՝ նաև էլեկտրոնային կրիչով՝ Microsoft Excel տարբերակով: Ցուցակի էլեկտրոնային տարբերակը ներբեռնվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքից և լրացվում այդ տարբերակում նշված եղանակով:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը դիտորդական առաքելություն իրականացնող կուսակցություններին, կազմակերպություններին համապատասխան վկայականներ է տրամադրում դիմումը ստանալուց հետո՝ **12 ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ:**

Տեղական դիտորդների դեպքում համապատասխան կուսակցությանը, կազմակերպությանը տրվում է համապատասխանաբար ներկայացված ցուցակներում ընդգրկված դիտորդների թվին համապատասխան քանակի վկայականներ, որոնցում լրացվում է համապատասխան կուսակցության կամ կազմակերպության անվանումը:

Դիտորդի վկայականում դիտորդի ազգանունը, անունը, հայրանունը լրացվում է համապատասխան կուսակցության կամ կազմակերպության կողմից և տրամադրվում է դիտորդին:

Վկայականը կարող է կնքվել նաև դիտորդական առաքելություն իրականացնող կուսակցության կամ կազմակերպության կնիքով:

Դիտորդների լիազորությունները դադարում են հանրաքվեի արդյունքների պաշտոնական **ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ՝ 8-ՐԴ ՕՐԸ,** եթե քվեարկության արդյունքները դատարան չեն բողոքարկվել: Հանրաքվեի արդյունքները դատարան բողոքարկելու դեպքում դիտորդների լիազորություններն ավարտվում են դատական ակտի հրապարակման օրվա հաջորդ օրը:

ԴԻՏՈՐԴԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Դիտորդն իրավունք ունի՝

- **ներկա գտնվելու ընտրական հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև քվեարկության սենյակում:**

Ընտրական հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև տեղամասային կենտրոնում (քվեարկության սենյակում), կարող են ներկա լինել յուրաքանչյուր միջազգային կազմակերպությունից մինչև **ԵՐԿՈՒ ԴԻՏՈՐԴ՝** թարգմանչի ուղեկցությամբ, իսկ տեղական դիտորդների դեպքում՝ Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր կուսակցությունից կամ յուրաքանչյուր կազմակերպությունից՝ **ՄԵԿ ԴԻՏՈՐԴ:**

Դիտորդը ընտրական հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև տեղամասային կենտրոնում (քվեարկության սենյակում), կարող է ներկա գտնվել, եթե կրում է սահմանված նմուշի վկայական:

Դիտորդի վկայականն ուժի մեջ է անձը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում:

Հանձնաժողովի նախագահն **ԱՐԳԵԼՈՒՄ Է** ընտրական հանձնաժողովներում, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք չունեցող անձանց, ինչպես նաև վերնազգեստի վրա առանց համապատասխան վկայականի անձանց ներկայությունն ընտրական հանձնաժողովում (քվեարկության սենյակում):

Հանձնաժողովի նախագահը դուրս է հրավիրում այն դիտորդներին, ովքեր ունեն քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք, սակայն վերնազգեստի վրա տեսանելի ձևով չեն կրում համապատասխան վկայական:

Դիտորդը պարտավոր է դիտորդի իր վկայականը տեսանելի ձևով կրել վերնազգեստի վրա:

Քվեարկության օրը տեղամասային կենտրոն (քվեարկության սենյակ) դիտորդի այցելության դեպքում համապատասխան գրառում է կատարվում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում (նշվում է կուսակցության, կազմակերպության անվանումը, դիտորդի անունը, ազգանունը և տեղամաս մուտք գործելու և տեղամասից հեռանալու ժամը):

Դիտորդն իրավունք ունի՝

- **հետևելու քվեաթերթիկների և ինքնասոնձվող դրոշմանիշերի տպագրման, փոխադրման, պահպանման և հաշվարկման գործընթացներին:**

Դիտորդները կարող են տպագրության ողջ ընթացքում տպագրատանը հետևել քվեաթերթիկների և ինքնասոնձվող դրոշմանիշների տպագրմանը, իրենց միջոցներով ուղեկցել քվեաթերթիկները և ինքնասոնձվող դրոշմանիշերը տպագրատնից տարածքային ընտրական հանձնաժողով, քվեար-

կության նախորդ օրը՝ տարածքային ընտրական հանձնաժողովից տեղամասային ընտրական հանձնաժողով, իսկ քվեարկության արդյունքներն ամփոփելուց հետո՝ հանրաքվեի փաստաթղթերը տեղամասային ընտրական հանձնաժողովից տարածքային ընտրական հանձնաժողով տեղափոխող մեքենան:

Դիտորդները կարող են քվեարկության նախորդ օրը հետևել հանրաքվեի փաստաթղթերը և տեխնիկական սարքավորումները տեղամասային ընտրական հանձնաժողովներին հատկացնելու գործընթացին, դրանց պահպանմանը:

Դիտորդն իրավունք ունի՝

- **ծանոթանալու Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, տարածքային ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող հանրաքվեի փաստաթղթերին և ինքնուրույն կատարելու քաղվածքներ, ստանալու պատճեններ այն փաստաթղթերից, որոնք տեղադրված չեն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:**

Դիտորդն իրավունք ունի՝

- **տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի, քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որևէ մեկի ներկայությամբ, ում կհանձնարարի հանձնաժողովի նախագահը, ծանոթանալու տեղամասային ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող հանրաքվեի փաստաթղթերին (բացառությամբ քվեարկության ընթացքում քվեարկությանը մասնակցած հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակների), դատարանի համապատասխան վճիռներին, քաղաքացիներին տրամադրած լիազոր մարմնի համապատասխան տեղեկանքին: Չմիջամտելով ընտրական հանձնաժողովի աշխատանքներին և չխաթարելով քվեարկության ընթացքը՝ ինքնուրույն կատարելու քաղվածքներ և նշումներ հանրաքվեի փաստաթղթերից (բացառությամբ քվեարկու-**

թյանը մասնակցած քաղաքացիների ցուցակների, քվեարկության կտրոնների):

! Քվեարկության ընթացքում քվեարկությանը մասնակցած քաղաքացիների ցուցակներից և քվեարկության կտրոններից քաղվածքներ և նշումներ կատարելն ԱՐԳԵԼՎՈՒՄ Է:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը քվեարկության արդյունքների ամփոփման, իսկ տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը քվեարկության արդյունքների վերահաշվարկի գործընթացը կազմակերպում են այնպես, որ դիտորդները հնարավորություն ունենան հետևել քվեարկության կտրոնների, ինքնասոսնձվող դրոշմանիշերի հաշվարկման, քվեաթերթիկների վավերականության որոշման, քվեաթերթիկների տեսակավորման, քվեաթերթիկների հաշվարկման գործընթացներին:

Դիտորդը կարող է լուսանկարել, տեսանկարահանել ընտրական հանձնաժողովների նիստերը, ինչպես նաև քվեարկության ընթացքը, քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացը և քվեարկության արդյունքների վերահաշվարկի աշխատանքները՝ չխախտելով քվեարկության գաղտնիության սկզբունքը:

Հանրաքվեի ժամանակ դիտորդները կարող են լուսանկարել կամ տեսանկարահանել տեղամասում կազմված հանրաքվեի քվեարկության արդյունքների արձանագրությունը:

Դիտորդի պահանջով նրան տրվում է տեղամասում հանրաքվեի քվեարկության արդյունքների արձանագրությունից քաղվածք՝ վավերացված հանձնաժողովի նախագահի և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով:

Դիտորդն իրավունք ունի՝

- **բողոքարկել ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը), եթե գտնում է, որ խախտվել են դիտորդի «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքները:**

Ընտրական հանձնաժողովներ ներկայացված դիմումը պետք է ստորագրված լինի, ներառի դիմողի անունը, ազգանունը, հասցեն, տրման ամսաթիվը (կարող է ներառել նաև դիմումատուի հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն): Դիմումում պետք է սահմանված լինի դիմումատուի պահանջը, բերված լինեն հիմնավորումները, իսկ հնարավոր ապացույցները պետք է կցված լինեն դիմումին:

Եթե դիմումը ներկայացվում է ներկայացուցչի միջոցով, ապա պետք է ներկայացվի նաև օրենքով սահմանված կարգով տրված լիազորագիր:

Դիտորդի կողմից ներկայացված դիմումներին կից պետք է ներկայացվի դիտորդի կարգավիճակը հավաստող փաստաթղթի (սահմանված նմուշի վկայականի) պատճենը:

Դիտորդն իրավունք ունի՝

- **ազատ տեղաշարժվելու քվեարկության սենյակում՝ քվեաթերթիկների, քվեարկության ծրարների, հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակների ու քվեատուփի դիտարկման համար:**

Դիտորդն իրավունք ունի՝

- **հրապարակայնորեն, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցներով հայտնելու կարծիք, անելու հայտարարություն՝ հանրաքվեի կազմակերպման և անցկացման վերաբերյալ:**

Դիտորդն իրավունք ունի՝

- **պահանջելու, որ իր գնահատականն արձանագրվի տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում, եթե գտնում է, որ քվեարկության ընթացքում տեղի է ունեցել «Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքով և Ընտրական օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտում:**

Դիտորդի «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով և Ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքների որևէ սահմանափակում չի թույլատրվում, բացառությամբ հետևյալ դեպքերի՝

1. Դիտորդը կարող է հեռացվել ընտրական հանձնաժողովի նիստից, իսկ քվեարկության օրը՝ տեղամասային կենտրոնից երբ՝

- դիտորդն աջակցում է հանրաքվեի քարոզչության որևէ կողմի.
- խախտում է «Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքով և Ընտրական օրենսգրքի պահանջներն այն եղանակով, որն էապես խաթարում է ընտրական հանձնաժողովի բնականոն աշխատանքը կամ քվեարկության բնականոն ընթացքը:

Դիտորդին ընտրական հանձնաժողովի նիստից, իսկ քվեարկության օրը՝ տեղամասային կենտրոնից՝ հեռացնելու մասին որոշումն ընդունվում է ընտրական հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն **2/3**-ով:

2. Եթե քվեարկության սենյակում գտնվող դիտորդների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների թիվն այնքան է, որ ակնհայտորեն խաթարում է քվեարկության բնականոն ընթացքը, ապա տեղամասային ընտրական հանձնաժողովն իրավասու է սահմանելու քվեարկության սենյակում միաժամանակյա գտնվելու իրավունք ունեցող դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների առավելագույն թիվը: Որոշումն ընդունվում է

տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն **2/3**-ով:

Որոշումը պետք է համապատասխանի համաչափության սկզբունքին, և ամեն դեպքում այդ որոշմամբ սահմանված թիվը չի կարող նվազ լինել 15-ից:

Այդ սահմանափակումը չի տարածվում՝

- այցելուների,
- միջազգային դիտորդների,
- վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստառադիոընկերությունների ներկայացուցիչների վրա:

Դիտորդին տեղամասային կենտրոնից կամ ընտրական հանձնաժողովի նիստերից դուրս հրավիրելու դեպքում ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում կատարվում է համապատասխան գրառում՝ նշելով պատճառները:

Դիտորդն իրավունք չունի՝

- միջամտելու ընտրական հանձնաժողովի աշխատանք-ներին.
- միջամտելու ընտրական հանձնաժողովի կողմից որոշում-ների ընդունմանը.
- միջամտելու քվեարկության ընթացքին.
- իրականացնելու քարոզչություն.
- ընտրական հանձնաժողովի անդամներին տալու ցուցում-ներ, ներկայացնելու պահանջներ.
- կատարել միջազգային իրավունքի նորմերին հակասող կամ «Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքով և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով չսահմանված գործառույթներ:

Դիտորդը պարտավոր է՝

- իր իրավունքներն իրականացնելիս լինել անկողմնակալ, չեզոք, հրապարակայնորեն որևէ կանխակալ դիրքորոշում չարտահայտել կամ նախապատվելի վերաբերմունք չդրսևորել հանրաքվեի քարոզչության կողմերի հետ կապված որևէ հարցի նկատմամբ: Դիտորդներն իրենց անձնական դիտարկումները կարող են ներկայացնել ընտրական հանձնաժողովներին դիտորդական առաքելության զեկույցի միջոցով: Դիտորդների բոլոր եզրահանգումների համար պետք է հիմք հանդիսանան իրենց անձնական դիտարկումները.
- գրանցվել ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում ընտրական հանձնաժողովի նիստերին, ինչպես նաև քվեարկության ընթացքում՝ քվեարկության սենյակում ներկա գտնվելու համար.
- պահպանել «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի և Ընտրական օրենսգրքի պահանջները:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏ-ՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽՈՐԴ ՕՐԸ

Տեղամասային ընտրական հանձնաժողովը՝

- ☑ իր նիստում վիճակահանությամբ բաշխում է տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի անհատական կնիքները
- ☑ հաշվում և դասավորում է քվեաթերթիկներն ու քվեարկության ծրարները՝ առանձնացնելով հարյուրական քվեաթերթիկ և քվեարկության ծրար
- ☑ հանրաքվեի փաստաթղթերը և նյութերը տեղավորում է չհրկիզվող պահարանում և կնքում այն.
- ☑ կահավորում է քվեարկության սենյակը, որը պետք է ավարտի մինչև ժամը 24.00-ն:

- ✓ Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը քվեարկության նախորդ օրը մասնագետին է հանձնում տեխնիկական սարքավորման կոմպլեկտը:
- ✓ Մասնագետը ստանում է տեխնիկական սարքավորման կոմպլեկտը և մյուս պարագաները, ստուգում է դրանց ամբողջականությունը, որից հետո իրականացնում է տեխնիկական սարքավորման միացման և տվյալների ստուգման աշխատանքները:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը պահարանը փակում և փակման մասը սոսնձում է թղթով, որի վրա ստորագրում են հանձնաժողովի նախագահը և քարտուղարը. հանձնաժողովի մյուս անդամները և վստահված անձինք ևս կարող են ստորագրել սոսնձված թղթի վրա: Հանձնաժողովի նախագահը չհրկիզվող պահարանը, տեխնիկական սարքավորումները պահպանության է հանձնում ոստիկանության ծառայողներին, որի մասին գրանցամատյանում կազմվում է արձանագրություն:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐԸ

Մինչև տեղամասային կենտրոնի բացումը ժամը 7:00-8:00-ն տեղամասային ընտրական հանձնաժողովի գործողությունների հաջորդականություն.

- ստուգվում է պահարանին սոսնձված թղթի ամբողջականությունը և ոստիկանության ծառայողներից ընդունվում է չհրկիզվող պահարանը.
- գրանցամատյանում կատարում է գրառում պահարանն ընդունելու մասին.
- իրականացվում է վիճակահանություն հանձնաժողովի անդամների գործառույթներն ու դրանց հերթափոխը որոշելու համար.
- վիճակահանության արդյունքները գրանցվում են գրանցամատյանում.
- տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ մասնագետը ստուգում է տեխնիկական սարքավորումների աշխատանքը, մուտքագրում է տեղամասի նույնականացման տվյալները և տպում է տվյալ տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանք.
- տեխնիկական սարքավորման միջոցով տպված գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանքը հրապարակվում և սոսնձվում է գրանցամատյանում.
- բացվում է չհրկիզվող պահարանը.
- հանձնաժողովի յուրաքանչյուր անդամին հանձնվում է նախորդ օրվա վիճակահանությամբ իրեն տրամադրված անհատական կնիքը.
- գրանցամատյանում կնիք դնելով՝ հայտարարվում է կնիքի համարը.

- ստուգվում, փակվում և կնքվում է քվեատուփը (առկայության դեպքում՝ նաև շրջիկ արկղը).
- հարյուրական փաթեթով քվեաթերթիկները և քվեարկության ծրարները հանձնվում է քվեաթերթիկներ և քվեարկության ծրարներ հատկացնող հանձնաժողովի անդամին (անդամներին).
- հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակները հանձնվում են գրանցման համար պատասխանատու հանձնաժողովի անդամին (անդամներին).
- հարյուր ինքնասոսնձվող դրոշմանիշ հատկացվում է ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու հանձնաժողովի անդամին:

Վերոհիշյալ բոլոր գործողությունների մասին տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում կատարվում են համապատասխան գրառումներ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ժամը 8:00-ին հանրաքվեի տեղամասը հայտարարվում է բացված և թույլատրվում է քվեարկության մասնակիցների մուտքը քվեարկության սենյակ:

1. Քվեարկության կարգը

Քվեարկությանը ներկայացած յուրաքանչյուր մասնակից պետք է գրանցվի: Առանց սահմանված կարգով գրանցվելու՝ քվեարկության մասնակիցը չի կարող ստանալ քվեաթերթիկ և քվեարկել:

Քվեարկության յուրաքանչյուր մասնակից մոտենում է մասնագետին և ներկայացնում անձը հաստատող փաստաթուղթը.

Հանրաքվեի ժամանակ քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացու անձը հաստատող փաստաթղթերն են՝

- ☑ *նույնականացման քարտը,*
- ☑ *կենսաչափական անձնագիրը,*
- ☑ *ոչ կենսաչափական անձնագիրը,*
- ☑ *անձնագրին կամ նույնականացման քարտին փոխարինող ժամանակավոր փաստաթուղթը՝ տրված լիազոր մարմնի կողմից:*

Զինծառայողների համար՝

- ☑ *զինվորական վկայականը կամ զինվորական գրքույկը, եթե գրանցվում են (քվեարկում են) զորամասում կազմված հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակում:*

Կալանքի տակ գտնվող և պատիժը կրող՝ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների համար՝

- ☑ *քրեակատարողական հիմնարկում գտնվող քաղաքացու անձը հաստատող փաստաթուղթը:*

Քվեարկության մասնակիցների գրանցումը տեխնիկական սարքավորումների կիրառմամբ

Ինքնության ստուգում

Մասնագետը քաղաքացուց ստանում է անձը հաստատող փաստաթուղթը և ստուգում է, թե արդյո՞ք անձը հաստատող փաստաթղթի լուսանկարը համապատասխանում է ընտրողին:

- ❗ **Եթե քաղաքացին ներկայացրել է մեկ այլ անձի փաստաթուղթ, ապա մասնագետը պարտավոր է տեղեկացնել հանձնաժողովի նախագահին և հանձնել նրան ներկայացրած փաստաթուղթը: Հանձնաժողովի նախագահը պարտավոր է հրավիրել ոստիկանության աշխատակիցների, ովքեր կձեռնարկեն օրենքով նախատեսված միջոցներ:**

Մասնագետը փաստաթուղթը ներմուծում է տեխնիկական սարքավորման մեջ կամ տվյալները մուտքագրում է ստեղնաշարով:

Եթե քաղաքացին **ԳՐԱՆՑՎԱԾ Է** տվյալ տեղամասի հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակում, ապա էկրանին հայտնվում է **ԿԱՆԱՉ** նշան. և քաղաքացու անունը, ազգանունը, լուսանկարը (էլեկտրոնային շտեմարանում դրա առկայության դեպքում), անձը հաստատող փաստաթղթի համարը և ցուցակում նրա հերթական համարը:

I. Քվեարկության մասնակիցը ներմուծում է իր աջ ձեռքի ցուցամատի մատնահետքը: Դրա անհնարինության դեպքում մատնահետքը ներմուծվում է հետևյալ առաջնայնությամբ՝ ձախ ձեռքի ցուցամատը, աջ ձեռքի միջնամատը, ձախ ձեռքի միջնամատը, աջ ձեռքի մատնեմատը, ձախ ձեռքի մատնեմատը, աջ ձեռքի ճկույթը, ձախ ձեռքի ճկույթը, աջ ձեռքի բթամատը, ձախ ձեռքի բթամատը:

! Մատնահետքը ներմուծելու անհնարինության դեպքում մատնահետքի ներմուծման քայլը բաց է թողնվում:

II. Դրանից հետո տեխնիկական սարքավորումը տպում է քվեարկության կտրոն, որը պարունակում է ցուցակում ընտրողի հերթական համարը, ազգանունը, անունը, անձը հաստատող փաստաթղթի համարը, քվեարկության կտրոնի հերթական համարը, իսկ թվային շտեմարանում առկա լինելու դեպքում՝ նաև լուսանկարը:

III. Մասնագետը տպված քվեարկության կտրոնը անձը հաստատող փաստաթղթի հետ վերադարձնում է, որից հետո քվեարկության մասնակիցը մոտենում է գրանցումն իրականացնող հանձնաժողովի համապատասխան անդամին:

IV. Գրանցումն իրականացնող հանձնաժողովի անդամը քվեարկության մասնակցից վերցնում է քվեարկության կտրոնը, հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակում գտնում է քաղաքացու տողը, քաղաքացին ստորագրում է իր տվյալների դիմաց՝ քվեարկության մասնակցի ստորագրության համար նախատեսված սյունակում, հանձնաժողովի անդամն իր անհատական կնիքն է դնում համապատասխան սյունակում, որից հետո անհատական կնիքով կնքում է քվեարկության կտրոնը և այն փոխանցում քաղաքացուն:



Եթե քվեարկության մասնակիցը **ԳՐԱՆՑՎԱԾ ՉԷ** տվյալ տեղամասի հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակում, ապա էկրանին հայտնվում է **ԴԵՂԻՆ** նշան: Այս դեպքում քաղաքացին ունի հետևյալ կարգավիճակներից որևէ մեկը.

1) քաղաքացին ընդգրկված չէ տվյալ տեղամասի ընտրողների ցուցակում և սարքավորմանը **ՀԱՅՏՆԻ Է,** թե որ տեղամասի ընտրող է,
2) քաղաքացին ընդգրկված չէ տվյալ տեղամասի ընտրողների ցուցակում և սարքավորմանը **ՀԱՅՏՆԻ ՉԷ,** թե որ տեղամասի ընտրող է,
3) քաղաքացին ներկայացրել է անձը հաստատող ժամկետանց փաստաթուղթ, մինչդեռ ունի մեկ այլ՝ վավերական փաստաթուղթ:

Նշված դեպքերում քաղաքացին դուրս է հրավիրվում քվեարկության սենյակից:



Եթե քաղաքացին իր անձը հաստատող որևէ փաստաթղթով արդեն իսկ մասնակցել է քվեարկությանը, էկրանին հայտնվում է **ԿԱՐՄԻՐ** նշան, ընտրողի անունը, ազգանունը, լուսանկարը (էլեկտրոնային շտեմարանում դրա առկայության դեպքում), անձը հաստատող փաստաթղթի համարը, տեղամասի ընտրողների ցուցակում հերթական համարը և «**ԿՐԿՆԱԿԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՓՈՐՁ**» ծանուցումը, էկրանին հայտնվում է նաև այն փաստաթղթի համարը, որով անձն արդեն գրանցված է եղել տվյալ տեղամասում և գրանցման ամսաթիվն ու ժամը:


ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՔՎԵ

ԿՐԿՆԱԿԻ
ԳՐԱՆՑՄԱՆ
ՓՈՐՁ

20/01 05/04/2020 15:06:32

Ընտրողների ցուցակում հերթական համարը 323

Անուն ԱՆՈՒՇ

Ազգանուն ՍՈՒՐԵՆՅԱՆ

Փաստաթուղթ՝ AP0550041

Անձը արդեն գրանցված է եղել այս տեղամասում հետևյալ փաստաթղթի համարով՝

AA321456

Գրանցման ժամը
05/04/2020 15:32

Ուշադրություն՝ կարմիր նշանի դեպքում տեխնիկական սարքավորման վրա միանում է ձայնային ազդանշան և տպվում է կրկնակի գրանցման փորձի կտրոն:

Մասնագետը տեղեկացնում է հանձնաժողովի նախագահին: Հանձնաժողովի նախագահը նման դեպքում քվեարկության սենյակ է հրավիրում ոստիկանության ծառայողներին, որոնք ձեռնարկում են օրենքով սահմանված միջոցներ:

Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների գրանցումն առանց տեխնիկական սարքավորումների կիրառման իրականացվում է հետևյալ դեպքերում.

- զորամասում հաշվառված քաղաքացիների ցուցակով քվեարկություն.
- քրեակատարողական հիմնարկում քվեարկություն.
- շրջիկ արկղով քվեարկություն.
- քվեարկության օրը տեղամասում կազմվող լրացուցիչ ցուցակով քվեարկություն.
- տեխնիկական սարքավորման խափանման կամ չլինելու պարագայում՝ քվեարկություն.

Զորամասում հաշվառված քաղաքացիների ցուցակով քվեարկության դեպքում

Քվեարկության օրը տեղամասում կազմվող՝ լրացուցիչ ցուցակով քվեարկության դեպքում

մինչև մասնագետին մոտենալը քաղաքացիների գրանցումն իրականացնող հանձնաժողովի համապատասխան անդամը՝

- **ստուգում է** քաղաքացու ինքնությունը.
- ցուցակում **գտնում է** քաղաքացու տվյալները,
- քվեարկության օրը տեղամասում կազմվող՝ լրացուցիչ ցուցակով քվեարկելու դեպքում **լրացնում է** քաղաքացու անունը, հայրանունը, ազգանունը.
- **լրացնում է** անձը հաստատող փաստաթղթի համարը.
- քաղաքացին **ստորագրում է** իր անվան դիմաց.
- հանձնաժողովի անդամը **դնում է** իր անհատական կնիքը ստորագրության դիմաց:

Մասնագետը տեխնիկական սարքավորման մեջ ներմուծում է, թե որ ցուցակի ընտրող է, ներմուծում է անձը հաստատող փաստաթուղթը, ապա ընտրողի համարը համապատասխան ցուցակում, որից հետո քաղաքացին ներմուծում է իր մատնահետքը:

Այդ գործողություններից հետո տեխնիկական սարքավորումը տպում է քվեարկության կտրոն, որը պարունակում է, թե որ ցուցակի ընտրող է, ընտրողի համարը համապատասխան ցուցակում և քվեարկության կտրոնի հերթական համարը և կտրոնը փոխանցում է քաղաքացուն:

Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների գրանցումը.

- ☑ քրեակատարողական հիմնարկում քվեարկության դեպքում.
- ☑ շրջիկ արկղով քվեարկության դեպքում.
- ☑ տեխնիկական սարքավորման խափանման կամ չլինելու դեպքում:



2. Քվեաթերթիկ և քվեարկության ծրար ստանալը

Գրանցվելուց անմիջապես հետո քաղաքացին մոտենում է հանձնաժողովի՝ քվեաթերթիկների և քվեարկության ծրարների տրամադրման համար պատասխանատու անդամին:

Հանրաքվեի քվեարկության ժամանակ քվեաթերթիկների և քվեարկության ծրարների տրամադրման համար պատասխանատու հանձնաժողովի անդամը քաղաքացուն տրամադրում է հանրաքվեի մեկ քվեաթերթիկ և քվեարկության մեկ ծրար:

3. Քվեարկությունը

Ստանալով քվեաթերթիկը և քվեարկության ծրարը, քվեարկության մասնակիցը անցնում է քվեարկության խցիկ՝ քվեարկելու:

Քվեարկության մասնակիցը քվեաթերթիկը լրացնում է գաղտնի՝ քվեարկության խցիկում: Արգելվում է որևէ ձևով տեղեկանալ, թե քվեարկության մասնակիցը ինչպես է քվեարկում:

ՀԱՆՐԱՔՎԵԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

- քվեարկության մասնակիցը **V ձևի** նշում է կատարում «Այո» բառի դիմացի քառանկյունում, եթե համաձայն է ընդունել հանրաքվեի դրված հարցը
- քվեարկության մասնակիցը **V ձևի** նշում է կատարում «Ոչ» բառի դիմացի քառանկյունում, եթե համաձայն չէ ընդունել հանրաքվեի դրված հարցը,
- քվեաթերթիկն **առանց ծալելու** դնում է քվեարկության ծրարի մեջ:

*Քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող քվեարկության մասնակիցն իրավունք ունի հանձնաժողովի նախագահին տեղեկացնելուց հետո քվեարկության խցիկ հրավիրելու այլ անձի, **որը չպետք է լինի ընտրական հանձնաժողովի անդամ, վստահված անձ, դիտորդ, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչ, այցելու:***

Անձն իրավունք ունի օգնելու քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող միայն **ՄԵԿ** քվեարկության մասնակցի: *Քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող քվեարկության մասնակցին օգնող անձի տվյալները գրառվում են տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:*

*Եթե քաղաքացին կարծում է, որ քվեաթերթիկը **սխալ է լրացրել կամ վնասել է,** ապա կարող է դիմել հանձնաժողովի նախագահին՝ նոր քվեաթերթիկ ստանալու համար: Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ քաղաքացուն հատկացվում է նոր քվեաթերթիկ:*

Սխալ լրացված (վնասված) քվեաթերթիկն անհապաղ մարվում է:

Քվեարկելուց անմիջապես հետո **ՔԱՂԱՔԱՑԻՆ՝**

- մոտենում է քվեատուփի մոտ ինքնասոնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամին,
- նրան է հանձնում քվեարկության կտրոնը:

4. Քվեատուփի մոտ

Ինքնասոնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու հանձնաժողովի **ԱՆԴԱՄԸ՝**

- ✓ ստուգում է կտրոնը, իր նախաձեռնությամբ կամ հանձնաժողովի այլ անդամի կամ վստահված անձի պահանջով կարող է ստուգել նաև քաղաքացու անձը հաստատող փաստաթուղթը.
- ✓ առանց քվեարկության ծրարն քաղաքացուց վերցնելու քվեարկության ծրարի կտրվածքի միջով քվեաթերթիկին է փակցնում ինքնասոնձվող դրոշմանիշը.
- ✓ բացում է քվեատուփի ճեղքը և հնարավորություն է ընձեռում քվեարկության ծրարը գցելու քվեատուփի մեջ:



Եթե քաղաքացին չի ներկայացնում քվեարկության կտրոն, ապա ինքնասոնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամը տեղեկացնում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին, որն վերցնում է քվեարկության ծրարը, անհապաղ մարում է՝ առանց ծրարի պարունակությունն ստուգելու:

Քվեարկության մասնակիցն իրավունք չունի տեղամասային կենտրոնում հայտարարելու, թե ինչպես է քվեարկել:

Քվեարկելուց հետո քվեարկության մասնակիցն անհապաղ պետք է դուրս գա քվեարկության սենյակից:

Քվեարկության ընթացքում տեղամասային ընտրական հանձնաժողովի ՆԱԽԱԳԱՀԸ՝

- մինչև **ժամը 11.30-ը, 14.30-ը, 17.30-ը և 20.30-ը** տարածքային ընտրական հանձնաժողով հաղորդում է համապատասխանաբար մինչև ժամը 11.00-ն, 14.00-ն, 17.00-ն և 20.00-ն տվյալ տեղամասում քվեարկությանը մասնակցած քաղաքացիների թիվը.
- պահպանում է կարգ ու կանոնը տեղամասային կենտրոնում և ապահովում է քվեարկության գաղտնիությունը.
- կարգավորում է քվեարկության մասնակիցների հոսքը տեղամասային կենտրոն.
- վիճակահանությունների արդյունքներին համապատասխան ապահովում է հանձնաժողովի անդամների՝ 2 ժամը մեկ պարբերականությամբ հերթափոխը.
- ըստ անհրաժեշտության քվեաթերթիկներ և քվեարկության ծրարներ է տրամադրում հանձնաժողովի՝ քվեաթերթիկների և քվեարկության ծրարների տրամադրման համար պատասխանատու անդամին.
- ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամին հատկացնում է ինքնասոսնձվող դրոշմանիշեր, եթե քվեարկության ընթացքում ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամին հատկացված ինքնասոսնձվող դրոշմանիշերը սպառվել են.
- նոր ինքնասոսնձվող դրոշմանիշերի հերթական խմբաքանակն է հանձնում ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամից քվեարկության կտրոնները ստանալուց հետո.
- հաշվում է ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամից ստացած քվեարկության կտրոնները, և թիվն արձանագրում է հանձնաժողովի գրանցամատյանում:

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՓԱԿՈՒՄԸ

Ժամը 20:00-ին տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հայտարարում է քվեարկության ավարտի մասին և

- ☑ արգելում է քաղաքացիների մուտքը քվեարկության սենյակ,
- ☑ քվեարկության սենյակում գտնվող քաղաքացիներին քվեարկելու հնարավորություն է տալիս,
- ☑ փակում է քվեատուփի ճեղքը,
- ☑ փակում է տեղամասային կենտրոնը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

Քվեարկության արդյունքների ամփոփումը կատարվում է քվեարկության սենյակում:

Քվեարկության արդյունքների ամփոփումն սկսվում է անմիջապես քվեարկության ավարտից հետո և ընթանում առանց ընդհատման մինչև քվեարկության արդյունքների ամփոփման վերաբերյալ արձանագրության կազմումը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովը մինչև քվեատուփը բացելը՝

- **փաթեթավորում է** հանձնաժողովի անդամների անհատական կնիքները, փաթեթը կնքվում և տեղադրվում է պարկում.
- **հաշվում է** հանրաքվեի տեղամասում հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների **հիմնական** ցուցակում քաղաքացիների ստորագրությունների հիման վրա **քվեարկության մասնակիցների ընդհանուր թիվը**
- Առկայության դեպքում **առանձին հաշվում է նաև՝**
  - ☑ քվեարկության օրն տեղամասում կազմված լրացուցիչ ցուցակում առկա ստորագրությունների թիվը,
  - ☑ շրջիկ արկղի միջոցով հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների **լրացուցիչ**

ցուցակներում ընգրկված քաղաքացիների ընդհանուր թիվը,

- ☑ շրջիկ արկղի միջոցով հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների **լրացուցիչ ցուցակներում** առկա ստորագրությունների թիվը:

- Այդ թվերը հրապարակվում և արձանագրվում են տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:
- Հանձնաժողովի նախագահը գրանցամատյանում արձանագրված՝ տեղամասում քվեարկության մասնակիցների ընդհանուր թիվը կապի հնարավոր միջոցներով անհապաղ հայտնում է տարածքային ընտրական հանձնաժողով:
- Եթե տեխնիկական սարքավորումն անխափան աշխատել է քվեարկության ընթացքում, ապա տեխնիկական սարքավորման միջոցով տպում է տեղեկանք, որում նշվում են տարածքային ընտրական հանձնաժողովի և ընտրական տեղամասի համարները, տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների հերթական համարը համապատասխան տեղամասի հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակում: Տեղեկանքը պետք է պարունակի նշում այն ընտրողների վերաբերյալ, որոնց գրանցումն իրականացվել է անձը հաստատող փաստաթղթի տվյալները ստեղնաշարով տեխնիկական սարքավորման մեջ ներմուծելու միջոցով:
- Տեղեկանքը տպելու անհնարինության դեպքում այդ մասին համապատասխան գրառում է կատարվում գրանցամատյանում:
- Տեղեկանքի մեկ օրինակը, ստորագրված տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից և կնքված հանձնաժողովի կնիքով, տեղադրվում է պարկում:
- Տեղեկանքի մեկական օրինակ, ստորագրված տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից և կնքված

հանձնաժողովի կնիքով, ըստ պահանջի տրամադրվում է ամփոփման նիստին ներկա գտնվող վստահված անձանց, դիտորդներին:

- Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակները (բացառությամբ զորամասում, քրեակատարողական հիմնարկում և ձերբակալված անձանց պահելու վայրում կազմվող քվեարկության մասնակիցների ստորագրված ցուցակների) տեղադրվում են առանձին պարկում (փոքր պարկ), փոքր պարկը փակվում է, պարկի վրա ստորագրում են հանձնաժողովի նախագահը և քարտուղարը, պարկը կնքվում է և պարկի վրա գրվում է տեղամասի համարը:
  - *Զորամասում, քրեակատարողական հիմնարկում և ձերբակալված անձանց պահելու վայրում կազմվող հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ստորագրված ցուցակները փաթեթավորվում են առանձին, փաթեթը կնքվում է և տեղադրվում հանրաքվեի փաստաթղթերի մեծ պարկում:*
- **Հաշվում է** քվեարկության մասնակիցներից ստացված տեխնիկական սարքավորման միջոցով տպված քվեարկության կտրոնները, փաթեթավորում, փաթեթները կնքում և տեղադրում է պարկում:
- **Հաշվում է** քվեարկության մասնակիցներից ստացված համարակալված քվեարկության կտրոնները, փաթեթավորում, փաթեթները կնքում և տեղադրում է պարկում:
- **Հաշվում է** քվեարկության մասնակիցներից ստացված կտրոնների ընդհանուր թիվը:
- **Հաշվում է** չօգտագործված համարակալված քվեարկության կտրոնները, փաթեթավորում, փաթեթը կնքում և տեղադրում է պարկում: (*Համարակալված քվեարկության կտրոնները չօգտագործվելու դեպքում դրանք չեն հաշվվում, և նշվում է*

տարածքային ընտրական հանձնաժողովի հաստատված կտրոնների թիվը):

- **Հաշվում է** չօգտագործված ինքնասոսնձվող դրոշմանիշերը, փաթեթավորում, փաթեթը կնքում և տեղադրում է պարկում:
- **Առանց հաշվելու փաթեթավորում է** չօգտագործված քվեաթերթիկները և սահմանված կարգով ներկայացնում տարածքային ընտրական հանձնաժողով:

! Այդ գործողությունների արդյունքները հրապարակվում են և արձանագրվում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

Քվեաթերթիկների տեսակավորումը

- Հանձնաժողովի նախագահը բացում է քվեատուփը.
- քվեատուփից հանում քվեարկության մեկ ծրար.
- ցուցադրում այնպես, որ այն տեսանելի լինի ներկաների համար.
- քվեարկության ծրարից հանում է քվեաթերթիկը:

Քվեարկության ծրարի մեջ մեկից ավելի քվեաթերթիկներ գտնվելու դեպքում **հաշվարկում ընդգրկվում է** միայն սահմանված նմուշի քվեաթերթիկը, այսինքն՝ հաստատված նմուշի քվեաթերթիկը, որի վրա փակցված է այդ տեղամասի ինքնասոսնձվող դրոշմանիշը:

Ավելորդ գրառում պարունակող քվեարկության ծրարի դեպքում քվեաթերթիկը ծրարից չի հանվում, քվեարկության ծրարը դրանում գտնվող քվեաթերթիկի հետ անհապաղ մարվում է:

Հանձնաժողովի նախագահը հայտարարում է քվեաթերթիկի՝

- սահմանված կամ չսահմանված նմուշի լինելու մասին,
- սահմանված քվեաթերթիկի դեպքում՝ վավեր կամ անվավեր լինելու մասին:

Հանրաքվեի քվեարկության դեպքում սահմանված նմուշի քվեաթերթիկն **ԱՆՎԱՎԵՐ Է,** եթե

- ✓ միաժամանակ «ԱՅՈ» և «ՈՉ» բառերի դիմաց նշումներ է ներառում.
- ✓ որևէ նշում չի ներառում.
- ✓ բացի քվեարկության համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կամ դրան նմանվող նշանից, ներառում է այլ՝ քվեարկողի ինքնությունը բացահայտող նշում.
- ✓ ակնհայտ խախտված է քվեաթերթիկում նշում կատարելու սահմանված ձևը:

Սահմանված ձևի ոչ էական խախտումը չի կարող համարվել քվեաթերթիկի անվավերության հիմք, եթե քվեարկությանը մասնակցողի մտադրությունը հստակ է և աներկբա:

ՎԱՎԵՐ ՔՎԵԱԹԵՐԹԻԿԻ դեպքում հայտարարում է ինչպես է քվեարկված («Այո», «Ոչ»)

Քվեաթերթիկները տեսակավորելիս՝ հանձնաժողովի նախագահը՝

- ➢ քվեաթերթիկը ցուցադրվում է այնպես, որ տեսանելի լինի ներկաների համար.
- ➢ պահանջի դեպքում քվեաթերթիկը փոխանցվում է հանձնաժողովի մյուս անդամներին.
- ➢ հանձնաժողովի նախագահի հայտարարությանը համաձայն չլինելու դեպքում հանձնաժողովի անդամը ներկայացնում է առարկություն.
- ➢ առարկության դեպքում քվեարկության է դրվում հանձնաժողովի անդամի առաջարկությունը.
- ➢ քվեաթերթիկը դրվում է քվեաթերթիկների փաթեթի մեջ:

Այս գործողությունը կրկնվում է քվեատուփում առկա բոլոր ծրարների և քվեաթերթիկների համար:

Քվեաթերթիկները տեսակավորելուց հետո՝ մեկ առ մեկ հաշվարկվում են՝

- ✓ «ԱՅՈ» քվեարկված քվեաթերթիկները,
- ✓ «ՈՉ» քվեարկված քվեաթերթիկները,
- ✓ անվավեր քվեաթերթիկները:

Հաշվարկված թվերը բարձրաձայն հայտարարվում և արձանագրվում են գրանցամատյանում:

Տեսակավորման ողջ ընթացքում հանձնաժողովի անդամներին արգելվում է նշումներ կատարել, ինչպես նաև իրենց մոտ ունենալ գրիչներ, մատիտներ և նշումներ կատարելու այլ առարկաներ:

Բոլոր քվեաթերթիկները տեսակավորելուց հետո փաթեթավորվում են առանձին փաթեթներում, յուրաքանչյուր փաթեթի (ծրարի) վրա նշվում է դրա պարունակության մասին:

Հիմք ընդունելով կատարված հաշվարկները և գրանցամատյանում արձանագրված տվյալները տեղամասային ընտրական հանձնաժողովը ***կազմում է տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրություն:***

Արձանագրության կազմումը հանձնաժողովը պետք է ավարտի քվեարկության ավարտից **12 ԺԱՄ** հետո:

Արձանագրությունը կազմվում է 4 օրինակից.

- ☑ **1 օրինակը** փակցվում է տեղամասային կենտրոնում՝ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակների կողքին.
- ☑ **1 օրինակը** տեղադրվում է հանրաքվեի փաստաթղթերի պարկում.
- ☑ **2 օրինակը** ներկայացվում են տարածքային ընտրական հանձնաժողով:

Արձանագրությունը ***ՍՏՈՐԱԳՐՈՒՄ ԵՆ*** *հանձնաժողովի նախագահը, քարտուղարը և անդամները,* ***ԿՆՔՈՒՄ Է*** *հանձնաժողովի նախագահը:*

Արձանագրության մեկ օրինակը հանրաքվեի փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկում տեղադրելուց հետո պարկը պետք է փակվի: **Պարկը փակելու համար պատասխանատու է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը:**

Քվեարկության ավարտից հետո ոչ ուշ, քան 14 ժամվա ընթացքում տարածքային ընտրական հանձնաժողով են ներկայացվում՝

- ☑ հանրաքվեի փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկը.
- ☑ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ստորագրված ցուցակների պարկը.
- ☑ չօգտագործված քվեարկության ծրարների փաթեթը.
- ☑ չօգտագործված քվեաթերթիկները.
- ☑ քվեարկության արդյունքների արձանագրության 2 օրինակը.
- ☑ տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը.
- ☑ տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքը.
- ☑ տեխնիկական սարքավորումը (սարքավորումները).
- ☑ քվեատուփը (քվեատուփերը),
- ☑ շրջիկ արկղը (առկայության դեպքում).
- ☑ քվեարկության խցիկները:

Հանրաքվեի փաստաթղթերը տարածքային ընտրական հանձնաժողով են տեղափոխում ոստիկանության ծառայողների ուղեկցությամբ: Վստահված անձինք կարող են իրենց միջոցներով ուղեկցելու հանրաքվեի փաստաթղթերը տեղամասային ընտրական հանձնաժողովից տարածքային ընտրական հանձնաժողով տեղափոխող մեքենան:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒՑ ՀԵՏՈ

Տարածքային ընտրական հանձնաժողովում ստուգվում է հանրաքվեի տեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության կազմման վավերականությունը, իսկ թվաբանական սխալների առկայության դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը վերացնում են այդ սխալները՝ ուղղումները վավերացնելով իրենց ստորագրություններով:

Ելակետային տվյալների փոփոխություն չի կատարվում: Ելակետային են տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից հատ-հատ հաշվելու միջոցով ստացված տվյալները:

Տարածքային ընտրական հանձնաժողովում նշում է կատարվում տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության ընդունման ամսաթվի և ժամանակի մասին, ինչը վավերացվում է տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ և հանձնաժողովի կնիքով:

Տարածքային ընտրական հանձնաժողովը համեմատում է տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքի համարը տեղամասային ընտրական հանձնաժողովի արձանագրության կնիքի համարի հետ:

Տարածքային ընտրական հանձնաժողովը պարբերաբար, բայց ոչ ուշ, քան **3 ԺԱՄԸ** մեկ տպում է քվեարկության արդյունքների աղյուսակավորումը:

Աղյուսակավորումը, վավերացված տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի (տեղակալի) և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով, անհապաղ փակցվում է հանձնաժողովում՝ բոլորի համար տեսանելի տեղում: Հանրաքվեի տեղամասերում քվեարկության արդյունքների արձա-

նագրությունների տվյալների մուտքագրումը համակարգիչ տարածքային ընտրական հանձնաժողովն ավարտում է քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան **20 ԺԱՄՎԱ** ընթացքում: Տարածքային ընտրական հանձնաժողովն աղյուսակավորում է քվեարկության արդյունքները՝ ըստ տեղամասերի, ինչպես նաև գումարային արդյունքների: Քվեարկության արդյունքների աղյուսակավորման վերջնական օրինակը, վավերացված հանձնաժողովի նախագահի (տեղակալի) և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով, անհապաղ փակցնում է հանձնաժողովում՝ բոլորի համար տեսանելի տեղում: Ընտրական հանձնաժողովի նիստին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց պահանջով նրանց տրվում է տարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում քվեարկության արդյունքների աղյուսակավորման մեկ օրինակ՝ վավերացված հանձնաժողովի նախագահի (տեղակալի) և քարտուղարի ստորագրություններով ու հանձնաժողովի կնիքով:

Հանրաքվեի քվեարկության ժամանակ տարածքային ընտրական հանձնաժողովը հանրաքվեի տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության մեկ օրինակը քվեարկության ավարտից **24 ԺԱՄ** հետո ներկայացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողով: Հանրաքվեի քվեարկության ժամանակ տարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկության հաջորդ օրը՝ **ԺԱՄԸ 12.00-ԻՑ ՍԿՍԱԾ**, իրականացնում է հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակների սկանավորում, որին կարող են հետևել ընտրական հանձնաժողովների անդամները, վստահված անձինք, դիտորդները և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները:

Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների սկանավորված ցուցակները ոչ ուշ, քան սկանավորման աշխատանքներն սկսվելուց **24 ԺԱՄ ՀԵՏՈ** պաշտոնապես հրապարակվում և ներբեռնելու և, ըստ տեղամասերի, որոնման հնարավորությամբ տեղադրվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

ՀԱՆՐԱՔՎԵԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը տարածքային ընտրական հանձնաժողովներից ստացված հանրաքվեի տեղամասերում քվեարկությունների արդյունքների հիման վրա քվեարկության ավարտից ոչ ուշ, քան **24 ԺԱՄ ՀԵՏՈ**, ամփոփում է հանրաքվեի քվեարկության նախնական արդյունքները, արձանագրությամբ վավերացնում դրանք:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ քվեարկության օրվանից հետո՝ 7-րդ օրը, հիմք ընդունելով հանրաքվեի տեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունները, վերահաշվարկի արդյունքները, քվեարկության արդյունքների վերաբերյալ ընդունած որոշումները, կազմում է արձանագրություն՝ քվեարկության արդյունքների վերաբերյալ:

* * *

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նորմատիվ և անհատական որոշումները տեղադրված են կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում՝ http://www.elections.am:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ 2

ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ 2

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԿԵՏԸ 4

ԴԻՏՈՐԴԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ 6

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ 14

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽՈՐԴ ՕՐԸ 14

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐԸ 15

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ 16

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՓԱԿՈՒՄԸ 26

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ 26

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒՑ ՀԵՏՈ 33

ՀԱՆՐԱՔՎԵԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ 35